Կարդա՛ տեքստը:

ԴԵԼՖԻՆՆԵՐԸ

Շոգ ու պայծառ օր էր: Հայրիկը և մայրիկը իրենց տղայի և շան հետ նավակով մեկնեցին զբոսանքի: Ծովի վրա հրաշալի էր: Ամեն ինչ լավ էր: Բայց հանկարծ նավակի շարժիչը փչացավ, իսկ ափը բավականին հեռու էր: Այդպես անցավ առաջին գիշերը:

Առավոտյան ափն այլևս չէր երևում: Սկսվեց ուժեղ քամի: Ծովն սկսեց ալեկոծվել: Քիչ էր մնում ալիքները խորտակեին նավակը: Կեսօրին նրանց շրջապատեցին շնաձկները:

Հենց այդ պահին նավակի մոտ հայտնվեցին մի քանի դելֆին: Հզոր հարվածներով նրանք շնաձկներին հեռացրին նավակից և սկսեցին պահպանել այն: Ամեն անգամ, երբ որևէ դելֆին հեռանում էր նավակից, սարսափազդու շնաձկները նորից էին փորձում մոտենալ: Նույն ակնթարթին նրանց դիմացը կտրում էին դելֆինները:

Այդպես շարունակեց երրորդ և չորրորդ օրը: Ուտելիքի պաշարը պատռվեց: Հինգերորդ օրը քամին ուղղությունը փոխեց: Հետո ալիքները հանդարտվեցին: Հեռվում երևաց ափը:

Դելֆինները նավակն ուղեկցեցին մինչև ափ: Նրանք հեռացան միայն այն ժամանակ, երբ մինչև ափ մնացել էր երկու հարյուր մետր:

Նշի՛ր ճիշտ պատասխանը:

1. **Ե՞րբ են տեղի ունեցել տեքստում նկարագրված դեպքերը:**

   1) ձմռանը 2) ամռանը

2. **Ընտանիքն ինչո՞ւ չկարողացավ նույն օրն ափ վերադառնալ զբոսանքից:**

   1) Շնաձկները հարձակվեցին նավակի վրա:
   2) Նավակի շարժիչը փչացավ:
   3) Սկսվեց ուժեղ քամի:

3. **Ընտանիքն ինչպե՞ս կարողացավ փրկվել շնաձկներից:**

   1) Նրանք կարողացան հեռացնել շնաձկներին:
   2) Դելֆինները հեռացրին նրանց:
   3) Շնաձկները վախեցան քամուց և չմոտեցան նավակին:

4. Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է տրված տեքստը:

1) պատմվածք 2) առակ 3) հեքիաթ

5. Ո՞ր շարք(եր)ի բայերն են հոմանիշներ:

1) գունատվել - կարմրել 2) որոնել - գտնել 3) գրոհել - հարձակվել

6. Ո՞ր շարք(եր)ի բոլոր բառերն են ածական:

1) հրաշալի, ափ, հեռու

2) սաթսափազդու, շնաձուկ, դելֆին

3) հրաշալի, պայծառ, շոգ

7. Տրված հարցերի օգնությամբ համապատասխան բայերով լրացրու՛ նախադասությունը:

Արևը (ի՞նչ է անում) երկնքում:

Չորացած տերևները (ի՞նչ արեցին) ծառերից: